ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 4/12

Քաղ. Երեւան 28 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. փետրվարի 28-ի նիստում (արձանագրություն N 2.2) քննարկեց «Բալտիյսկայա Գազովայա Կոմպանիյա» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2012թ. հունվարի 19-ին ներկայացված «NEVA LUX» (հայտի համարը N 1042347) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը "Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու" կարգի 87-րդ կետի 2-րդ «ա». 106.1-ի կետի «ա», 115-րդ կետի 1-ին, 117-րդ կետի 10–րդ, 125-րդ կետի 2-րդ ենթակետերը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը:

«NEVA LUX» (հայտի համարը N 1042347) հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «NEVA» և ՆԵՎԱ» (ռուս.) (OTIS ELEVATOR COMPANY, 10 Farm Springs, Farmigton, Connecticut 06032, US N14594, 14595) բառային ապրանքային նշանի առկայության

պատճառով, քանի որ նշաններից մեկը մտնում է մյուսի մեջ, տվյալ դեպքում գրանցված «NEVA» նշանը մտնում է հայտարկվող «NEVA LUX» նշանի մեջ, որը այդ նշանում հանդիսանում է հիմնական ընկալման տարր:

Բողոքում նշված է, որ «Բալտիյսկայա Գազովայա Կոմպանիա» հայտատու-ընկերությունը հիմնադրվել է 1995թ.–ին, Սանկտ Պետերբուրգում և զբաղեցնում է առաջատար դիրք կենցաղային գազի սարքավորումների արտադրանքի և առաքման շուկայում: Ընկերությունը հիմնականում զբաղվում է՝

-գազի ջրատաքացուցիչների, գազի կաթսաների և գազօջախների արտադրությամբ,

-գազի և էլեկտրական սարքավորումների մեծածախ և մանրածախ առևտրով,

-օբյեկտների գազիֆիկացմամբ, ինժեներական համակարգերի նախագծմամբ և մոնտաժով,

-կենցաղային գազի և էլեկտրական սարքավորումների նորոգմամբ և ծառայությունների սպասարկմամբ, տարածքների տաքացման և տաք ջրի մատակարարման հետ կապված կոմպլեքս աշխատանքների կատարմամբ,

-գազի սարքավորումների փոփոխման մունիցիպալ ծրագրերով:

Բողոքում նշված է, որ հայտատու-ընկերությունը հանդիսանում է Վկ. N 354537, 268449, 349727, 367995, 328948 «HEBA» և «NEVA LUX» ապրանքային նշանների սեփականատերը Ռուսաստանի Դաշնությունում: Բացի այդ, հայտատուն կարևորում է նաև այն, որ «HEBA» ապրանքային նշանով գազօջախները հայտնի են ողջ աշխարհում, այդ թվում նաև հայ սպառողին, դեռևս Խորհրդային Միության ժամանակներից:

Իսկ հակադրված ապրանքային նշանների սեփականատեր «OTIS ELEVATOR COMPANI» ընկերությունը զբաղվում է վերելակներով և վերելակային սարքավորումներով:

Ակնհայտ է, որ երկու ընկերությունները զբաղվում են բացարձակ տարբեր ոլորտներին պատկանող ապրանքների արտադրանքով: Բացի այդ ամենևին էլ տարօրինակ չէ նաև այն հանգամանքը, որ ռուսական ՕՕՕ «Բալտիյսկայա Գազովայա Կոմպանիա» հայտատու–ընկերությունն իր ապրանքները պիտակավորելու համար օգտագործում է «HEBA» և «NEVA LUX» անվանումները, որը հանդիսանում է նաև աշխարհագրական անվանում, այսինքն՝ Նեվան գետ է Ռուսաստանում, որն անցնում է Լենինգրադյան մարզի և Սանկտ Պետերբուրգի տարածքով: Իսկ հակադրված ապրանքային նշանների սեփականատերը հանդիսանում է ԱՄՆ իրավաբանական անձ:

Նշված է նաև, որ և՛ հայտարկված «NEVA LUX», և՛ «NEVA», «HEBA» ապրանքային նշանները համագոյակցում են ռուսական շուկայում, կարելի է եզրակացնել, որ նշանները չեն

շփոթեցնում սպառողին, և որ հակադրված նշանները խոչընդոտ չեն կարող հանդիսանալ «NEVA LUX» ապրանքային նշանի գրանցմանը ՀՀ տարածքում:

Ամփոփելով իր միտքը, բողոքարկողը խնդրում է վերանայել միջազգային հայտ N IR 1042347 «NEVA LUX» ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին որոշումը և այն գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ հայտարկված բոլոր ապրանքների համար:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հունվարի 19-ին «Բալտիյսկայա Գազովայա Կոմպանիյա» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից ներկայացվել է «NEVA LUX» (հայտի համարը N 1042347) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց մերժման հիմքը: Նշվեց, որ «NEVA LUX» (հայտի համարը N 1042347) հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «NEVA» և ՆԵՎԱ» (ռուս.) (OTIS ELEVATOR COMPANY, 10 Farm Springs, Farmigton, Connecticut 06032, US N14594, 14595) բառային ապրանքային նշանի առկայության պատճառով, քանի որ նշաններից մեկը մտնում է մյուսի մեջ, տվյալ դեպքում գրանցված «NEVA» նշանը մտնում է հայտարկվող «NEVA LUX» նշանի մեջ, որը նշանում հանդիսանում է հիմնական ընկալման տարր:

Կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ երկու ընկերությունները զբաղվում են բացարձակ տարբեր ոլորտներին պատկանող ապրանքների արտադրանքով: Եթե «NEVA LUX» ապրանքային նշանի սեփականատեր «Բալտիյսկայա Գազովայա Կոմպանիյա» ընկերության ոլորտը հետևյալն է՝

-գազի ջրատաքացուցիչների, գազի կաթսաների և գազօջախների արտադրություն,

-գազի և էլեկտրական սարքավորումների մեծածախ և մանրածախ առևտուր,

-օբյեկտների գազիֆիկացմամբ, ինժեներական համակարգերի նախագծում և մոնտաժ,

-կենցաղային գազի և էլեկտրական սարքավորումների նորոգման և ծառայությունների սպասարկման, տարածքների տաքացման և տաք ջրի մատակարարման հետ կապված կոմպլեքս աշխատանքների կատարում,

-գազի սարքավորումների փոփոխում մունիցիպալ ծրագրերով,

ապա «NEVA» և ՆԵՎԱ» ապրանքային նշանի սեփականատեր «OTIS ELEVATOR COMPANY» ընկերության գործունեությունը սահմանափակվում է վերլակներով և վերելակային սարքավորումներով:

Բողոքարկման խորհուրդը, ընդանուր վերլուծության արդյունքում, եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի փաստարները համոզիչ են և սպառողը չի կարող շփոթել «NEVA LUX» (հայտի համարը N 1042347) և «NEVA» և ՆԵՎԱ» ապրանքային նշանները՝ հաշվի առնելով ընկերությունների գործունեության ոլորտները:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել N 1042347 միջազգային գրանցում ունեցող «NEVA LUX» ապրանքային նշանին միջազգային գրանցման մեջ նշված ապրանքների և ծառայությունների մի մասի համար պահպանության տրամադրումը նախնական մերժման մասին Գործակալության 03.06.2011թ. և կրակնական փորձաքննության՝ 26.09.2011թ. որոշումները և պահպանություն տրամադրել «NEVA LUX» ապրանքային նշանին N 1042347 միջազգային գրանցման մեջ նշված բոլոր ապրանքների և ծառայությունների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան